Հրանտ Թադևոսյան. էկոլոգիապես մաքուր արվեստ

Ով երբևէ այցելել է ՀՀ ժողովրդական նկարիչ Հրանտ Թադևոսյանի, նույն ինքը՝ Թաթոսի արվեստանոց, իրեն հաստատ հայտնաբերել է Հայաստանի գեղատեսիլ բնության գրկում: Պատերին կախված և մեջք մեջքի հենած տասնյակ, չասելու համար՝ հարյուրավոր կտավներում մեր բնաշխարհի ծանոթ-անծանոթ անկյուններն են, ծառերն ու թփերը, իսկ գլխավորապես՝ ծաղիկնե՞ր, ծաղիկնե՞ր, ծաղիկնե՞ր... Նկարիչը, իր իսկ խոսքերով, գիտի ՀՀ յուրաքանչյուր քառակուսի մետրը. նկարել է իր ծննդավայր Շիրակ աշխարհը, Լոռին, Սյունիքը, մյուս տարածաշրջանները: Նա բնավ զանազանություն չի դնում մարզերի ու բնակավայրերի միջև. բոլորը միասին և առանձին-առանձին վերցրած՝ մեր հող հայրենին են: «Հայաստանի որ մասն էլ գնաս, նկարելու բան կա»,- ասում է նա՝ նկատել տալով իր ամենասիրած բույրը «հողի բույրը»:



Բնապաշտ արվեստագետը ծնվել է Մեծ Մանթաշին մերձակա Արևշատ գյուղում: Անուրախ մանկություն է ունեցել. երեք տարեկանում զրկվել է ծնողներից և հասակ առել Արթիկի մանկատանը: Հուշերն իրեն ետ են տանում դեպի մանկության ուրախ-տխուր օրերը, երբ տուֆի հանքերում բանող գերմանացի ռազմագերիներին հաց էին տանում և փոխարենը, որպես նվեր, ստանում քարի խեժից պատրաստված փոքրիկ մեքենաներ: Այդժամ գնահատեց արվեստը, զգաց ձեռագործ աշխատանքի հմայքը:

Սկսել է ստեղծագործել դեռ դպրոցական տարիներից՝ մասնակցելով աշակերտական տարբեր ցուցահանդեսների: Երևանում կազմակերպված նամանատիպ մի ծեռնարկի ժամանակ անձամբ Մարտիրոս Սարյանից ստացել է ներկերի տուփ, ոսկե մեդալ և վրձիններ: Ճակատագրական է եղել նաև հանդիպումը նշանավոր գեղանկարիչ Գաբրիել Գյուրջյանի հետ, ով հավանելով օժտված պատանու նկարները՝ խորհուրդներ է տվել նրան և ուղղորդել Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարան: Այդտեղից էլ մեկնել է բանակ, որտեղ շարունակել է իր սիրած գործը: Վերադառնալուց հետո ուսումը շարունակել է Երևանի Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի գեղագիտության ֆակուլտետում՝ ունենալով այնպիսի դասախոսներ, ինչպիսիք են՝ Հովհաննես Զարդարյանը, Արտաշես Հունանյանը, Արտաշես Հովսեփյանը, Լյուդվիգ Բերբերյանը, ուրիշներ:

Ամենահետաքրքիրն ու զարմանալին այն է եղել, որ երբ 1965-ին բուհն ավարտելուց հետո ցանկացել է մասնակցել հանրապետական գեղարվեստական ցուցահանդեսների՝ անվերջ մերժվել է: Որպես հետևանք չի ստեղծագործել մի ամբողջ քսանամյակ՝ մինչև 1985 թվականը: Անսալով, սակայն, ընկերների խորհրդին՝ վերջապես խախտել է լռության ուխտը և տարիներով ունեցած կուտակումն անհագորեն հանձնել թղթին ու կտավին: Այսպիսով, 1989-ին, 51 տարեկան հասակում Հայաստանի Լրագրողների տանն առաջին անգամ բացել է իր անհատական ցուցահանդեսը: Իրենց գործընկերոջ վերադարձը հայկական վրձնաշխարհ ողջունել են էդուարդ Արծրունյանը, Ալեքսանդր Գրիգորյանը՝ հրավիրելով ընդունվել ՀՀ Նկարիչների միության շարքերը:

Անցած 30 տարում արդեն մոտ 30 անհատական ցուցահանդես է ունեցել Հայաստանում, Գերմանիայում, Ֆրանսիայում, Շվեյցարիայում, ԱՄՆ-ում, Արգենտինայում, Ճապոնիայում, Չինաստանում, այլուր: Դրանց միջուկը կազմել են նրա բնանկարները: «Ինչ նկարում եմ, բնություն է ստացվում,- մեր զրույցում անկեղծորեն խոստովանեց Հրանտ Թադևոսյանը՝ հավելելով,- Նույնիսկ աբստրակտ նկարներս ծնվել են բնությունից»: Իրոք, կտավների բնականորեն թարմ ու անխառն գույները մեզ հրամցնում են էկոլոգիապես մաքուր արվեստ, որը կարծես մեր շուրջ ավելացնում է թթվածնի չափաբաժինը և դիտողին համակում կենսասիրությամբ ու լավատեսությամբ: Նրա արվեստի երկրպագուներից մեջբերենք ՀՀ ժողովրդական արտիստ Սոս Սարգսյանի հետևյալ խոսքերը. «Կարծում եմ՝ չեմ սխալվի, եթե ասեմ, որ էն, ինչ Հովհաննես Թումանյանն ու Հրանտ Մաթևոսյանը Լոռվա բնաշխարհը իրենց բառ ու բանով են նկարագրել ու ներկայացրել,

գեղանկարիչ Հրանտ Թադևոսյանն էդ ամենին գույն ու երանգ է տվել: Նրա կտավներում ես հանգստանում եմ>>:

«Ես բնություն եմ գնում ոչ թե էտյուդի, այլ ավարտուն աշխատանք անելու համար»,- այսպես իր միտքը պարզաբանեց առաջացած տարիքի արվեստագետը: Այո՛, չնայած ութսունամյակի շեմին լինելու հանգամանքին՝ նա բնություն է «գնում» գրեթե ամեն օր, եթե թույլ են տալիս ժամանակն ու զբաղվածությունը (2008-ից դասավանդում է Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանում): Ես հասկացա, որ բնության տվյալ տեսարանը մինչ կտավին փոխանցելը նա մտովի այն «նկարում է» իր հոգում կամ, ինչպես ինքն է ասում, իրենով անում, ապա նոր սկսում աշխատել:

Սիրում է հատկապես գարունն ու աշունը, երբ բնությունը զարթոնք է ապրում կամ հակառակը՝ մերկացնում իր գույները: Ձմռանն էլ ձմռան նման հանգստանում է ու խաղաղվում: Իմանալով մինչ հիմա վարպետի վրձնած նկարների թիվը՝ շուրջ 6000, ակամա հարցրի թե որքա՞ն ժամանակում է նկարում մեկ մեծաչափ նկարը: «Երեք ժամում»,- ժպիտով պատասխանեց նա՝ պատճառելով թե՛ զարմանք, թե՛ հիացմունք: Բնական է, որ գույնը պիտի լիներ նրա նկարչության առաջատար տարրը և առաջնորդիչ ուժը: Գիծը ոչ թե չկա, այլ կարծես ամենևին չկա դրա անհրաժեշտությունը: Ամենազոր գույնին է հանձնված նկարչական մակերեսի ողջ տիրույթը: Այն իմաստակիր է և լավագույնս է թարգմանում հեղինակի զգացողությունը, բնության նրա ընկալումը:

Ասվածն, իհարկե, ամենևին չի նշանակում, թե Հրանտ Թադևոսյանը միայն բնանկարիչ է: Ո՛չ, նա ունի թե՛ նատյուրմորտներ (դարձյալ հիմնականում ծաղիկներով), թե՛ վերացարկված հորինվածքներ և թե՛ կոմպոզիցիոն նկարներ: Վերջիններիցս առանձնացնենք հոգևոր թեմաներով նրա գործերը և մասնավորապես «Խաչելությունը»: Տիրոջ խաչելության պատկերներ՝ թե՛ դասական, թե՛ ժամանակակից, շատ եմ տեսել: Այս մեկը, սակայն, տարբեր է մյուսներից իր լուծմամբ և գունային գամմայով: Ներքևում՝ մթության մեջ, հավատացյալներն են՝ հայացքն առ երկինք ու խաչյալ Քրիստոսը: Աստծո որդին, ամբողջությամբ ճեփ-ճերմակ ու պատանքով փաթաթված, կոմպոզիցիայի կենտրոնն է կազմում: Նրա լուսե կերպարը շարունակվում է

մեկ այլ՝ «Լույսի խորհուրդը» կտավում, որտեղ դարձյալ ճերմակազգեստ Քրիստոսն ու իր աշակերտները հայացքները հառել են Դեմիուրգ-Աստծուն՝ նրանից ապավինելով խորհուրդ ու կարեկցանք:

Հրանտ Թադևոսյանի՝ դիմանկար կերտելու վարպետությունն արդեն զգալի էր ուսանողական տարիներից: Վկան՝ նրա արվեստանոցի պատին այսօր էլ կախված հասուն աշխատանքն է՝ <<Օհան պապի դիմանկարը>> (1962): Որքան էլ հեղինակը շարունակել է այդուհետ տասնյալ նոր դիմանկարներ կերտել, նրա նախասիրած ժանրը եղել և մնում է բնանկարը: Վերջինս հայրենիքը սիրել տալու հետ միասին նաև դաստիարակչական մեծ առաքելություն ունի նորահաս սերնդի համար:

Այդ և մյուս ժանրերի ընտրանին արվեստասերը կարող է համահավաք տեսնել ապրիլի 20-ին Հայաստանի ազգային պատկերասրահում բացվելիք հոբելյանական ցուցահանդեսի ժամանակ: Շնորհավորում ենք վարպես Թաթոսին՝ Հրանտ Թադևոսյանին, թե՛ ծննդյան 80 ամյակի և թե՛ օրերս ՌԴ Գեղարվեստի ակադեմիայի Պատվավոր անդամ ընտրվելու կապակցությամբ:

Լևոն Լաճիկյան